

ԿՈՒՏԱԿՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԲԱԺՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ՆԱԼԶԱՋՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՊՏՀ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,

ԳՊՀ դասախոս

Էլփոստ՝ Ina.tadevosyan76@mail.ru

Հոդվածում քննարկվում են տնային տնտեսությունների սպառման և կուտակման օպտիմալ հարաբերակցության հիմնախնդիրը, գոյություն ունեցող հիմնական ռազմավարությունները, վերլուծվում են դրանց առավելություններն ու թերությունները: Ցույց է տրվում, որ այս կարևոր տնտեսագիտական հիմնախնդիրը դեռևս չունի գիտականորեն հիմնավորված և ընդունելի լուծում: Առաջարկվում է այս հիմնախնդրի լուծման հնարավոր նոր մոտեցում՝ վարիացիոն հաշվի կիրառմամբ, նշվում են դրան հասնելու միջոցները:

Բանալի բառեր՝ սպառում, կուտակում, հարաբերակցություն, խնայողություններ, տարիք, ռազմավարություն, արդյունավետություն, կենսամակարդակ:

Խնայողությունների կամ կուտակումների էությունը: Տնային տնտեսությունների սպառման և կուտակման ռացիոնալ հարաբերակցությունը որոշելու հիմնախնդիրը միշտ էլ արդիական է և կարևոր, քանի որ ուղղակիորեն առնչվում է բնակչության կենսամակարդակի հետ:

Ըստ ժամանակակից տնտեսագիտական բառարանների՝ խնայողությունը կամ կուտակումը բնակչության եկամտի և սպառողական ծախսերի տարբերությունն է, որը խնայվում է ապագա գնումների ու պահանջմունքների բավարարման համար: Ըստ Օժեգովի և Ուշակովի բացատրական բառարանների՝ խնայողությունը կուտակված փողի մեծությունն է: Արտաքին տնտեսական բացատրական բառարանում կարդում ենք. «Խնայողությունը եկամտի այն մասն է, որը մնում է սպառումից հետո»: Իսկ համաշխարհային բանկի տնտեսագիտական բառարանը խնայողությունները սահմանում է այսպես. «Խնայողությունները եկամուտներ են, որոնք ծախսված չեն ընթացիկ սպառման վրա, այլ պահված են ապագայի համար»: Ըստ Վիկիպեդիայի. «Խնայողությունները բնակչության դրամական եկամուտների կու-

տակվող մասն է, որը նախատեսված է ապագայում պահանջմունքները բավարարելու համար»:

Մեր կարծիքով՝ այս և մյուս բոլոր սահմանումներն էլ ավելի կամ պակաս չափով հաշվի չեն առնում խնայողությունների կոտակման գործընթացի շարունակականությունը ժամանակի մեջ, հետևաբար, չեն կարող լիարժեքորեն կիրառվել խնայողություններ կատարելու զանազան ռազմավարությունների մշակման, ինչպես նաև դրանց իրական արդյունավետությունները համեմատելու նպատակով:

Խնայողություններ չանելու տնտեսական պատճառները: Ինչպես հաղորդում է «Ռոսիյսկայա գազետան» 03.10.2017թ.-ին, հղում կատարելով Հասարակական կարծիքի ուսումնասիրության համառուսաստանյան կենտրոնին, «Ռուսաստանցիների 63 տոկոսը չունի ոչ մի խնայողություն»:

«ՌենեսանսԿրեդիտի» փոխնախագահ, դեպոզիտների և կոմիսիոն պրոդուկտների դեպարտամենտի տնօրեն Գալինա Ուտկինան հայտնել է, որ տվյալներ են հավաքել հարցումների և վիճակագրության միջոցով, թե ինչու մարդիկ խնայողություններ չեն անում: Տնտեսական բնույթի հիմնական պատճառներն են.

- եկամուտը ցածր է, ծախսվում է ուտելիքի, հագուստի, կոմունալ վճարումների, վարկերի վրա (վերջին տարիներին այս գործոնի ազդեցությունն աճել է),

- հնարավորություն ունեն, բայց չեն խնայում, քանի որ դրա անհրաժեշտությունը չկա կամ չեն կարող ընտրել հարմար գործիք (այսպիսի դեպքերում փողն ուղղվում է կյանքի որակի բարձրացմանը),

- ավանդների դիմաց տրվող համեմատաբար ցածր տոկոսադրույքները:

Բայց կան նաև մարդիկ, ովքեր կարող են և ցանկանում են խնայել սեփական միջոցները: Նրանց քանակը կազմում է բնակչության մոտավորապես 37 տոկոսը, բայց իրականում թե որքան են նրանք և առավել ևս ինչ են հասկանում խնայողություն ասելով, դժվար է ասել: Հաճախորդների մեծ մասը խնայողություն են համարում սեփական աշխատավարձից 2-3 անգամ մեծ գումարը, իսկ ավելի հարուստների համար այդ գումարի չափն ավելի անհատական է, ինչպես որ անհատական են նաև այդ փողի պահպանման և աճեցման գործիքները: Այսպիսով, խնայողության միատեսակ և բոլորի համար ընդունելի օպտիմալ մեծություն չկա:

Անկասկած պետք է լինի «անվտանգության բարձիկ» կամ «փրկօղակ», որը թույլ կտա մշտական եկամտի կորստի դեպքում որոշ ժամանակ պահպանել կենսամակարդակը: Նման դեպքերում օպտիմալ է համարվում ունենալ 6-12 ամսվա ընտանեկան բյուջեին հավասար գումար, ընդ որում բարձր իրացվելիությամբ պարտատոմսերում, բանկային ավանդներում կամ հաշիվներում:

Եթե գումարը բավականաչափ խոշոր է, ապա կիրառվում են նաև ավելի բարձր եկամտաբերությամբ, բայց և ավելի ռիսկային գործիքներ: Օրինակ՝ հետխորհրդային տարածքում ֆիզիկական անձանց կողմից որպես այդպիսիք կիրառվում են անշարժ գույքի հետ կապված գործարքները: Եթե մինչև 10 տարի պարբերականությամբ տեղի է ունենում որևէ ֆինանսական ճգնաժամ, ապա խնայողության վիրտուալ գործիքների նկատմամբ վստահությունն ընկնում է: Բայց անշարժ գույքում ներդրումները նույնպես ունեն թերություններ. մուտքի բարձր շեմ, ցածր իրացվելիություն, անշարժ գույքի շուկայում գների անկման վտանգ, գույքի պահպանման ծախսեր և այլն:

Խնայողություններ չանելու անհատական-անձնական բնույթի հիմնական պատճառները: Բանկերի նկատմամբ վստահության մակարդակը վերջին տարիներին կայուն է, ընդ որում ցածր չէ: Այստեղ կարևոր է նաև ավանդների ապահովագրական համակարգի առկայությունը և, որ ավելի կարևոր է, այդ համակարգի հստակ և անխափան աշխատանքն ապահովագրական դեպքը տեղի ունենալիս: Օրինակ՝ ՌԴ-ում ֆիզիկական անձանց և անհատ ձեռներեցների՝ մինչև 1.4 մլն ռուբլի կազմող միջոցները բանկերում ավանդների և հաշիվների վրա վճարվում են վարկային կազմակերպության լիցենզիայի հետևանքան դեպքում: ՀՀ-ում այս սահմանաչափը կազմում է 10 մլն դրամ, որը մեծ ճշգրտությամբ հավասար է ՌԴ-ի նմանատիպ ցուցանիշին: Սա ընդհանուր առմամբ կարելի է դիտարկել որպես դրական հանգամանք փոխկապված տնտեսություններով մեր երկու երկրների բոլոր քաղաքացիների համար: Իհարկե, նշված փոխկապվածությունը հիմնականում միակողմանի է, բայց ՀՀ-ում ևս բանկային համակարգը բավարար չափով զարգացած է: ՌԴ-ում և ՀՀ-ում ավանդների վերադարձման երաշխավորված և բավականին խոշոր սահմանաչափերի առկայությունն ու դրանց՝ գործնականում իրար հավասար լինելու գործոնն ունի շատ կարևոր նշանակություն երկու երկրներում բանկային համակարգերի կայունության համար, քանի որ ֆինանսական ինստիտուտի մոտ խնդիրների կամ դրանց շուրջն ասեկոսների ի հայտ գալու դեպքում հաճախորդների մեծ մասը խուճապա-

հար չի վագի իր միջոցները հանելու երկրի ներսում կամ էլ մի պետությունից մյուսը:

Որպես կանոն, եկամուտների աճին զուգընթաց համամասնորեն աճում են նաև ծախսերը, հետևաբար գրեթե ամբողջ փողը ծախսվում է ընթացիկ կարիքների վրա (մարդիկ ցանկանում են ներկայում ծախսել, հաճույք ստանալ, այլ ոչ թե ապագայում): Բայց ավելորդ ծախսերը խնայողության հիմնական թշնամին են: Ըստ մեկ այլ հետազոտության՝ ՌԴ-ի բնակչության մոտ 69 տոկոսը չունի խնայողություններ (մոտ է նախորդ գնահատականին), իսկ որպես դրա անհատական-անձնական բնույթի հիմնական պատճառներ՝ կարելի է նշել հետևյալները.

- ֆինանսական գրագիտության բացակայությունը կամ այն բարձրացնելու ցանկության բացակայությունը (կարծում են, թե ամեն ինչի պատճառը աշխատավարձի ցածր լինելն է),
- բացասական պատմությունը (դեֆոլտ, արժեզրկում, խնայողությունների կորուստ),
- մասնագետներին, ֆինանսական խորհրդատուներին դիմելու ցանկության բացակայությունը (մասնավորապես չեն կամենում իրենց միջոցների մասին տեղեկություն տալ),
- սեփական իրավունքները և հնարավորությունները չիմանալը (կորցնում են իրենց՝ օրենքով հասանելիք վճարները, լրիվ ծավալով չեն օգտվում իրենց արտոնություններից, զեղչերից և այլն),
- փողի շարժի հաշվարկի բացակայությունը (չգիտեն իրենց ծախսերը, չեն գրանցում դրանք),
- սեփական ծախսերի վերլուծության բացակայությունը,
- ազգային սովորույթներին ամբողջ ծավալով հետևելը,
- գովազդային ստանդարտներին չափից ավելի ուշադրություն դարձնելը,
- առանց անհրաժեշտության վարկեր վերցնելը,
- սեփական առևտրային և ֆինանսական գործարքների պլանավորման բացակայությունը:

Նկատենք, որ նշված պատճառներից մի քանիսը կախված են ոչ միայն քաղաքացիների անհատական-անձնական բնույթի որակներից, այլև տվյալ պետությունում տեղի ունեցած, ընթացող և սպասվող ամենատարբեր գործընթացներից:

Որոշ տվյալներ և հանձնարարականներ ամերիկացիների խնայողությունների վերաբերյալ: Նույնիսկ կենսաթոշակային տարիքին մոտեցող ամերիկացիների խնայողությունները շատ հեռու են բավարար լինելուց: Այսպես, ամերիկյան մեկ տնային տնտեսության համար կենսաթոշակային խնայողությունները կազմում են դոլարով՝ ըստ տարիքային խմբերի /միջինը և տիպականը/.

25-34 տ.՝ 13000 և 0, 35-44 տ.՝ 31000 և 1400, 45-54 տ.՝ 60000 և 10100, 55-64 տ.՝ 100000 և 12000, բոլոր խմբերի համար /25-64 տ./՝ 40000 և 3000:

Անձնական ֆինանսների փորձագետ, Ինթուիտ ֆիրմայի ֆինանսական խորհրդատու Կիմմի Գրինն առաջարկում է խնայողություններ կատարելու հետևյալ կանոնը կամ ռազմավարությունը. կուտակված խնայողությունը պետք է կազմի տարեկան աշխատավարձի 25 տոկոսը՝ 20 տարեկանում, 100 տոկոսը՝ 30 տարեկանում, կրկնապատիկը՝ 35 տարեկանում, եռապատիկը՝ 40 տարեկանում, քառապատիկը՝ 45 տարեկանում, հնգապատիկը՝ 50 տարեկանում, վեցապատիկը՝ 55 տարեկանում, յոթնապատիկը՝ 60 տարեկանում, ութնապատիկը՝ 65 տարեկանում: Կենսաթոշակային պլանների մատակարար Ֆիդելիթի Ինվեսթմենթս կազմակերպության հանձնարարականով 30 տարեկանում խնայողությունը պետք է լինի 1 տարվա աշխատավարձի չափ, իսկ 67 տարեկանում՝ 1 տարվա աշխատավարձի տասնապատիկի չափ:

Մեկ այլ հանձնարարականով առաջարկվում է հետևյալ ռազմավարությունը. խնայողության ծավալը պետք է կազմի սպառողի տարիքի և տարեկան աշխատավարձի արտադրյալի 10 տոկոսը:

Խնայողության լավագույն ռազմավարության որոնում. մի քանի տիպական տարբերակների համեմատում:

Պարզագույն օրինակով ցույց տանք, որ այդ ռազմավարությունն ակնհայտորեն լավագույնը չէ և էականորեն զիջում է, օրինակ, Ֆելպսի հայտնի ռազմավարությանը: Ենթադրենք, որ սկզբնական խնայողություն չունեցող սպառողը 23 տարեկան է, նրա աշխատավարձը դիտարկվող 40 տարիների ընթացքում հաստատուն է և կազմում է տարեկան 10000 ԱՄՆ դոլար, խնայողությունները ներդրվում են տարեկան 12 տոկոս տոկոսադրույքով: Նվազագույն տարեկան սպառումը, որին համաձայն է սպառողը, կազմում է 5000 ԱՄՆ դոլար: Մեր կողմից մշակված աղյուսակային մոդելից հետևում է, որ սկսած 5-րդ տարվանից՝ սպառումն անշեղորեն աճում է՝


սկզբից բարձր տեմպով, բայց հետո աճի տեմպը զգալիորեն թուլանում է՝ տարեկան աճելով ընդամենը 120 ԱՄՆ դոլարով, որը բավարար տեմպ համարել չի կարելի (կապույտ կորը գծապատկեր 1-ում): Սպառումն ամբողջ ժամանակահատվածում կկազմի շուրջ 530000 դոլար, իսկ խնայողությունը ժամկետի վերջում՝ 62000 դոլար: Ֆելպսի ստանդարտ ռազմավարությունը նույն սկզբնական պայմանների և տվյալների դեպքում ներկայացված է գծապատկեր 1-ում կարմիր կորով, որը, մեր կարծիքով, ընդհանուր առմամբ ավելի նախընտրելի է. ճիշտ է, սպառման աճն ավելի ուշ է սկսվում, բայց հետագա աճի տեմպը շատ ավելի բարձր է՝ տարեկան 1200 ԱՄՆ դոլար: Զգալիորեն բարձր է նաև սպառումն ամբողջ ժամանակահատվածում՝ 868000 դոլարից ավելին, իսկ խնայողությունը ժամկետի վերջում՝ 380000 դոլար: Երկարատև ծրագրավորման դեպքում ստանդարտ ռազմավարության առավելությունն ակնհայտ է:

Կարելի է փորձել բարեփոխել (մոդիֆիկացնել) քննարկվող ռազմավարությունը՝ սպառմանը հատկացնելով 5000 դոլար, մինչև որ խնայողությունը կգերազանցի հանձնարարված մակարդակը, որից հետո սպառումը յուրաքանչյուր տարի 5000 դոլարի նկատմամբ ավելացնել նախորդ տարում ստացած տոկոսագումարի չափով (կանաչ կորը գծապատկեր 1-ում): Սպառումն ամբողջ ժամանակահատվածում կկազմի մոտ 690000 դոլար, իսկ խնայողությունը ժամկետի վերջում՝ 206700 դոլար: Ըստ երևույթին, սա էականորեն ավելի նախընտրելի ռազմավարություն է, քան սկզբնականը, քանի որ ունի 600 դոլար տարեկան աճի տեմպ, բայց, այնուամենայնիվ, զիջում է ստանդարտ ռազմավարությանը՝ հատկապես երկարատև ժամկետներում:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ ամբողջ ժամանակահատվածում սպառման ծավալի և ժամկետի վերջում խնայողության ծավալի ողջամիտ հարաբերակցությունը սահմանելու հիմնախնդիրը ևս լուծված չէ:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ ի տարբերություն Ֆելպսի ստանդարտ ռազմավարության՝ առաջարկվող ռազմավարությունները «շտապում» են՝ անհարկի կերպով ավելի մոտ ժամկետներում սկսելով սպառման աճը, բայց դրա հետևանքով վերջին հաշվով նվազում են և՛ աճի տեմպը, և՛ կենսամակարդակը ամբողջ ժամանակաշրջանում, և՛ վերջնական խնայողությունը: Նկատենք, որ ինչքան ավելի շուտ է սկսվում սպառման չհիմնավորված աճը, այնքան դրա հետևանքները կլինեն ավելի վատ և դեռ ավելի երկար ժամանակ անվերացնելի կլինեն:

Գծապատկեր 1. Սպառման կախվածությունը ժամանակից խնայողություններ կատարելու տարբեր ռազմավարությունների դեպքում:



Գծապատկեր 1. Սպառման կախվածությունը ժամանակից խնայողություններ կատարելու տարբեր ռազմավարությունների դեպքում:

Գտնում ենք, որ այս հիմնախնդրի առավել հիմնավորաձև լուծում կարելի է ստանալ, եթե այն ձևակերպվի որպես վարիացիոն խնդիր, որտեղ որոնելի էքստրեմալի սկիզբն ամրացված է, իսկ ավարտը գտնվում է վերջնաժամկետով անցնող ուղղահայացի վրա, ընդ որում օպտիմալ ռազմավարությունը կախված կլինի նպատակային ֆունկցիայի տեսքից, որի մեջ կարող են ընդգրկվել կենսամակարդակն ամբողջ ժամանակահատվածում ճշգրտված, օրինակ, լրակցության ֆունկցիայով, վերջնական խնայողության չափը և սպառման աճի տեմպը՝ որոշակիորեն հիմնավորված գործակիցներով: Նշված պայմաններին բավարարող ռազմավարություն կիրառելու դեպքում սպառողը, որոշելով իր սպառման և կուտակման ռացիոնալ հարաբերակցությունը, կհասնի առավելագույն կենսամակարդակի՝ ամբողջ ամանակաշրջանում ապահովելով սպառման անշեղ աճ և վերջնական խնայողության մեծ ծավալ:

CONSUMPTION AND ACCUMULATION RATIO ASSESSMENT PRINCIPLES

NALCHAJYAN VAHRAM

Ph.D. Assistant Professor, ASUE,

e-mail: Ina.tadevosyan76@mail.ru

The problem of optimal consumption and accumulation of households, existing key strategies, and their advantages and disadvantages are discussed. It is shown that this important economic problem does not have a justifiable and



acceptable solution yet. The possible new metering of this problem, using the variation account and the means to achieve it are mentioned.

Key words: *consumption, accumulation, ratio, savings, age, strategy, efficiency, life standard.*

ПРИНЦИПЫ ОЦЕНКИ СООТНОШЕНИЯ ПОТРЕБЛЕНИЯ И НАКОПЛЕНИЯ

НАЛЧАДЖЯН ВАГРАМ

Кандидат экономических наук, доцент АГЭУ

электронная почта: lna.tadevosyan76@mail.ru

Рассматривается проблема определения оптимальной стратегии потребления и накопления домашних хозяйств, указаны наиболее известные в экономике стратегии, отмечены их преимущества и недостатки. Сделан вывод, что научно обоснованного и приемлемого решения этой актуальной экономической задачи в настоящее время не существует. Предложен новый подход к решению этой проблемы методами вариационного исчисления, указаны средства реализации данного предложения.

Ключевые слова: *потребление, накопление, соотношение, сбережение, возраст, стратегия, эффективность, уровень жизни.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 18.09.2021թ.: